ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

19 մարտ 2015թ. N 75

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գարեգինյան

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 13-ի թիվ 11, 12-Ն, 13,14,15-Ն,16,17 և 18 որոշումները:

Առդիր՝ 13 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Լեյլի Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 11

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 13-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 84-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 05 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:

4.Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասեր աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:

5.Համայնքային սեփականություն համարվող հողամասը փոխանակելու մասին:
6.Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 45 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7.Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրենի դիմումը քննարկելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 12-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 84-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ծաղկաձորի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի "Ծաղկաձոր քաղաքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 84-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններ՝

1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիրնգործադիրմարմիններ պետականկառավարում) հոդված 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) “300.0հազ. դրամը փոխարինել 1000.0հազ. դրամ":

2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիրնգործադիրմարմիններ պետականկառավարում) հոդված 4241 (Մասնագիտական ծառայություններ) “20.0հազ. դրամը փոխարինել 40.0հազ. դրամ":

3) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիրնգործադիրմարմիններ պետականկառավարում) հոդված 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) “0.0հազ. դրամը փոխարինել 2500.0հազ. դրամ":

4) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) “0.0հազ. դրամը փոխարինել 7000.0հազ. դրամ":

5) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5134 (Նախագծահետազոտականծախսեր) “0.0հազ. դրամը փոխարինել 700.0հազ. դրամ":

6) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) հոդված 4251(Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) “0.0հազ. դրամը փոխարինել 2500.0հազ. դրամ":

7) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) “13000.0 հազ. դրամը փոխարինել 5300.0 հազ. դրամ":

8) Բաժին 8 խումբ 2 դաս 2 (Մշակութային ծառայություններ (Թանգարաններ և ցուցասրահներ)) հոդված 4639 (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) “0.0 հազ. դրամը փոխարինել 100.0 հազ. դրամ":

9) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) “500.0 հազ. դրամը փոխարինել 1000.0 հազ. դրամ”:

10) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) “0.0 հազ. դրամը փոխարինել 450.0 հազ. դրամ”:

11) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 5122 (Վարչական սարքավորումներ) “3500.0 հազ. դրամը փոխարինել 1000.0 հազ. դրամ”:

12) Բաժին 11խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված 4891 (Պահուստային միջոցներ) “7029.8 հազ. դրամը փոխարինել 2759.8 հազ. դրամ”:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 13

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 05 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի "Ծաղկաձորի համայնքի 2015 թվականի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 05 որոշման հավելված 3-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ 3-րդ տողի «67000» թիվը փոխարինել «78000» թվով և <<Ընդամենը>> տողի <<2107900>> թիվը փոխարինել <<2118900>> թվով:

ԿՈՂՄ -6 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Ծաղկաձոր քաղաքի ավագանու 2015 թվականի
մարտի 13-ի N 14 որոշման

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման

1. Համայնքի հիմնական բնութագիրը

համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝ 1618.29 հա

բնակչության թիվը՝ 1503 մարդ

հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝

բնակավայրի հողեր՝ 162.71 հա

այդ թվում բնակելի կառուցապատման հողեր 47.54հա, որից տնամերձ հողեր 45.97հա

հասարակական կառուցապատման հողեր՝ 74.50հա

ընդհանուր օգտագործման հողեր՝ 26.48հա
այլ հողեր՝14.29հա

գյուղատնտեսական նշանակության հողեր 59.16հա

արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 5.63 հա

էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝

0.79 հա

հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1014.54 հա

(այդ թվում՝պատմական և մշակութային հողեր՝4.72հա)

առողջարարական հողեր 6.30հա

հանգստի հողեր 1003.52հա

հատուկ նշանակության հողեր ---հա

անտառային հողեր 366.96 հա

ջրային հողեր՝ 8.50 հա

պահուստային հողեր --- հա

2. Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը

տվյալներ համայնքում առկա բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ պաշարների վերաբերյալ

Համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղեր են համարվում ռեկրեացիոն ինդուստրիան և էկոլոգիական տուրիզմը:

տվյալներ համայնքում առկա արտադրությքան գերիշխող ճյուղերի վերաբերյալ

Համայքը հանրապետական նշանակության ավտոճանապարհներով կապված է Հրազդան մարզկենտրոնի, ինչպես նաև Երևան-Հանքավան հանրապետական ավտոմայուղու հետ: Համայնքը կոյուղացված է, ապահովված է էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերով:

տվյալներ համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ

3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են՝ հանգստի, սպորտային գործունեության և տուրիզմի կազմակերպումը:

համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները

4. Նախագծման հիմքը.

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքը, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի <<Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին N408 որոշումը և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1920-Ն ՀՀ համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2003թ մայիսի 2-ի N 609-Ն ու 2010թ մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը և 2003թ մայիսի 2-ի N 625-Ն որոշումը, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծի վերաբերյալ համայնքի ավագանու 2014 թ N... որոշումը *(գլխավոր հատակագծի լրամշակման անհրաժեշտության և այդ աշխատանքների համար գումար տրամադրելու մասին):*

5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները,

ՀՀ կառավարության որոշում «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին, ՀՀ կառավարության որոշում Ծաղկաձոր քաղաքը զբոսաշրջության կենտրոն հայտարարելու մասին, ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված <<Ծաղկաձորը՝ միջազգային

չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն>> նպատակային խնդիրների լուծման ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների մասին: ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն «ՀՀ մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի թիվ 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 429 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի թիվ 138 – Ն որոշումները:

որոշումների ընդունման ժամկետները, համարը, (կցել պատճենները)

6. Քաղաքաշինական (այդ թվում՝ հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները.

Ապահովել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նախատեսված սահմանափակումները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումները:

նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դրանց առկայության դեպքում

7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում).

Առկա են՝ ՀՀ Կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 927-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագիծը, կադաստրային և հողօգտագործման քարտեզները, տվյալներ տարածքի փաստացի օգտագործման վերաբերյալ, տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ, համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պատճեներ:

նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներաերկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ '«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ –ից .

8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի 2006 թվականին հաստատված գլխավոր հատակագիծը չի ընդգրկում համայնքի ամբողջ վարչական տարածքը և համայնքի հողատարածքների համատարած և ոչ նպատակահարմար մասնավորեցումը բերել է անհրաժեշտ ենթակառուցվածքային և ծավալատարածական զարգացման փակուղի, անհրաժեշտություն է առաջանում

մշակել նոր գլխավոր հատակագիծ և տարածքի գոտիավորման նախագիծ, որոնցով կսահմանվեն քաղաքի հետագա զարգացման առաջնային, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը:

անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները

9. Համայնքի գոտևորման նախագծին և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային ներկայացվող պահանջները.

Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում մշակել նաև հողերի գոտիավորման և օգտագործման սխեման, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագիծը և համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ ՀՀ կառավարության 2003թ մայիսի 2-ի N 625-Ն և ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N 408 որոշումներով սահմանված պահանջներին համապատասխան:

10. Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները

Համայնքի տարածական զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները, այդ թվում ճարտարապետահատակագծային և գործառական զարգացումը, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների սպասարկման ու զարգացման կազմակերպումը, գծային օբյեկտների պահպանմանն ու կատարելագործմանը, շրջակա միջավայրի, լանդշաֆտների պահպնությանն ու կատարելագործմանը, քաղաքաշիական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացմանը,տարածքների կազմակեպմանն ու կառուցապատմանը, պատմության և մշակութային հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները:
Գրաֆիկական մասով գլխավոր հատակագիծը մշակվում է հետևյալ բովանդակությամբ և կազմով՝ համայնքի առկա վիճակի հատակագիծ/ հենակետային հատակագիծ/, սեփականության սուբյեկտների գծագիր, ռիսկերի և սահմանափակումների քարտեզ/համալիր գնահատման հատակագիծ/, ինժեներաերկրաբանական շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզ, համայնքի տարածական զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/, բնության, պատմության և մշակույթի հատուկ պահպանվող տարածքները, դրանց պահպանման գոտիները, հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիրը, հատակագծի իրականացման հերթականությունը, կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման գծագիր:

ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջադրանքը կազմեց՝ ***Ա.Մեսրոպյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 15-Ն

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիր
ք.Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 6/7	0.0445հա	հատուկ պահպանվող, հանգստի համար	07-005-0023-0249
ք.Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 6/5	0.1հա	հատուկ պահպանվող, հանգստի համար	07-005-0023-0250
ք.Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 6/4	0.05հա	հատուկ պահպանվող, հանգստի համար	07-005-0023-0251

2.Հողամասերի մեկնարկային գինը սահմանել դրանց կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 16

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին քաղաք Ծաղկաձոր, Անտառային 2-րդ թաղամաս թիվ 4/7 հասցեում գտնվող, Գրիգոր Արայի Մինասյանի սեփականությունը հանդիսացող 0.3055 հա մակերեսով հողամասը փոխանակել քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց թիվ 6/6 հասցեում գտնվող 0.3055 հա մակերեսով հողամասի հետ, որը հանդիսանում է համայնքային սեփականություն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 17

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 45 որոշման հավելվածում «Գարիկ Բաղալյան-աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Լեյլի Խաչատրյան-աշխատակազմի քարտուղարի ժ/պ» բառերով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտ 2015 թվականի թիվ 18

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրենի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրների տուն-թանգարանին տրամադրել դրամական աջակցություն՝ 100 000(մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հովսեփ Օրբելու «Ճատրակ» գիտական աշխատանքը հրատարակելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**